

իսկ՝ 1781ին Առաջնորդ կը կարգուի Թիֆլիզի, պատուաւոր բարձր նուիրակութիւններու կը գործածուի, եւ Ղուկաս Կաթողիկոս արտաքոյ կարգի համակրութեամբ կը գրէ իր վճայ, անուանելով զանիկայ միշտ «սիրելի որդեակ մեր, Աստուածիմաստ վարդապետ»:

Ղուկաս Կթղկս. 1780 շուտ.ին վրաց շերակղ թագաւորին շնորհակալութեան նամակ մը կը գրէ եւ կը շրկէ Կարապետ Արքեպ.ի ձեռք ի Թիֆլիզ, այս նամակին մէջ կը գրէ «... Այլ եւ՝ ահա զսիրելին մեր Կարապետ Արքեպոս.ն յղեցաք ի սպաս մեծութեան քոյ՝ այսու շնորհակալութեան թղթով մատուցանել Աստուածսիրութեան քում ի մերս դիմաց զողջոյն եւ զօրհնութիւն Աստուածային, եւ ի հարցանելն զողջունէ եւ զբարեկեցութենէ Աստուածազօր Արքայիդ եւ ի դառնալն գիտող առնել մեզ...» (Գիւ. Գ. էջ 36) նոյնը կը կրկնուի նաեւ վրաց Անտոն Կաթողիկոսին գրած նամակին մէջ (անդ, էջ 38, 128), ինչպէս նաեւ նոյն թուականաւ Իսրայէլ Կաթողիկոսին նամակին մէջ կ'ըսէ. «... որովհետեւ զսիրելիդ մեր Կարապետ Աստուածիմաստ վարդապետդ եւ զԱրհիեպիսկոպոսդ յղեցաք ի սպաս Աստուածազօր սիրեցելոյ մերոյ ի Քրիստոս...»:

Ղուկաս Կթղկս.ի 1781ին Հաշտարխանու նուիրակ Յովս. Արքեպ. Արղութեանցին գրած նամակէն կ'իմացուի, որ Յովս. Արքեպ. Թիֆլիզի մէջ առաջնորդական գործեր կը կատարէր եւ Թիֆլիզէն Մոսկուա երթալու միջոցին՝ կ'առա-